

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն



Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում
Կոտայքի մարզ, Ծաղկաձոր, Մ. Մկրտչյան փողոց թիվ 60

Նախաձեռնող;

«ՔԵՅՋԻԷՄ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 62, թիվ 3

Տնօրեն; Ռուդոլֆ Գրիգորյան

Mob; + (374) 77 204549

E-mail; rudo-7@mail.ru



Խորհրդատու;

Ծառուրյան Քընսալթինգ



Տնօրեն Արայիկ Ծառուրյան



<https://tsaturyanconsulting.am/>

Mob; (+374) 94 800 877;

E-mail; info@tsaturyanconsulting.am

Բովանդակություն

Հապավումներ.....	4
1. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորում	5
2. Նախատեսվող գործունեության տարածքի նկարագիրը.....	17
3. Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	60
3.1. Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	74
4. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատում	88
4.1. Նախագծում և պլանավորում	92
4.2. Ժամանակավոր ջրահեռացման համակարգեր.....	92
4.3. Ստորերկրյա ջրերի հոսքի կառավարում	92
4.4. Անձրևաջրերի կառավարում	93
4.5. Ջրահեռացման մշտական համակարգի կառուցում	93
4.6. Շինհրապարակի անվտանգություն	93
4.7. Շրջակա միջավայրի պաշտպանություն	93
4.8. Կանոնակարգերի համապատասխանություն	94
5. Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատում.....	106
6. Շրջակա Միջավայրի և Սոցիալական ռիսկերի գնահատում	108
7. Բնապահպանական կառավարման պլան	109
8. Մշտադիտարկման ծրագիր	113
Հավելված 1	
Հավելված 3	
Հավելված 4	
Հավելված 5	
Հավելված 6	
Հավելված 7	125
Հավելված 8	126

Հապավումներ

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ- Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ- պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՇՄԱԳ- Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

ԶԿՏ- ջրավազանային կառավարման տարածք

1. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) գործընթաց է, որի նպատակն է գնահատել մարդու գործունեության ազդեցությունները շրջակա միջավայրի վրա՝ փորձելով կանխել, մեղմացնել կամ նվազեցնել այդ ազդեցությունները նախքան նախագծերի կամ ծրագրերի իրականացումը:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կարևոր է կայուն զարգացման ապահովման և էկոլոգիական հավասարակշռության պահպանման համար:

Այս հաշվետվության շրջանակում գնահատվել է Կոտայքի մարզ, Ծաղկաձոր, Մ. Մկրտչյան փողոց թիվ 60 հասցեում, «ՔԵՅՋԻԷՄ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող հյուրանոցային համալիրի կառուցում:

Համալիրը գործելու է **Radisson Hotel Group** միջազգային բրենդի հավատարմագրված կառավարման ենթակայությամբ: Հյուրանոցային բիզնեսում հավատարմագրված կառավարումը վերաբերում է այն իրավիճակին, երբ հյուրանոցի սեփականատերը կնքում է պայմանագիր հավատարմագրված ընկերության հետ, որն իր անունից կկառավարի հյուրանոցը: Այս մոդելը թույլ է տալիս սեփականատիրոջը վստահել իր գույքի օպերատիվ կառավարումը փորձառու ընկերությանը՝ միևնույն ժամանակ չմասնակցելով հյուրանոցի ամենօրյա գործառույթներին:

Այսպիսի համագործակցության առավելություններն են՝ փորձառություն, բրենդավորում, օպերացիոն արդյունավետություն, ֆինանսական հմուտ կառավարում: Այս մոդելը հաճախ կիրառվում է մեծ հյուրանոցային ցանցերում, որտեղ կառավարման մասնագիտացված մեծ փորձով ընկերությունները կամ օպերատորները ստանձնում են հյուրանոցի ընթացիկ գործունեությունը, որը ներառում է գույքի կառավարում, աշխատակիցների կառավարում, մարքեթինգ, և այլն:

«ՔԵՅՁԻԷՄ» ՍՊԸ-ի կողմից հյուրանոցային համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվել է գործող օրենսդրական և նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Համաձայն 2023թ. մայիսի 3-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է *Բ կատեգորիայի գործունեության տեսակ* և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հյուրանոցային համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Գնահատումը և փորձաքննությունը կատարվում են մինչև նախատեսվող գործունեության իրականացումը: Առանց պետական փորձաքննական դրական եզրակացության նախատեսվող գործունեության փաստացի իրականացումը ենթակա է դադարեցման՝ նախատեսվող գործունեությունը փաստացի իրականացրած անձի կողմից նախնական վիճակի վերականգնմամբ:

Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Գնահատման արդյունքով նախաձեռնողը կազմում է հաշվետվություն՝ սույն օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան, և ներկայացնում փորձաքննության:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" Օրենքի հոդված 15-ով սահմանված է Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներն;

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական

գեոդեզիական կոորդինատային համակարգով

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

ՀՀ կառավարության 1325 որոշմամբ սահմանված է հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները:

Սահմանված կարգով, այս նախաձեռնության շրջանակում, Ծաղկաձոր համայնքում որի վարչական սահմաններում իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, իրականացվել է հանրային լսումներ:

Ծաղկաձոր համայնքի ավագանին ընդունել է որոշում (Հավելված 1) նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու վերաբերյալ:

Իրավական կարգավորումներ

Նախատեսվող գործունեությանը առնչվող բնապահպանական, առողջության և տեխնիկական անվտանգության հարցերով պետական և միջազգային իրավական ակտերը և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝

ՀՀ օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հողված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277- Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները: “Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք, Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով: ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերով:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք, ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին ՀՀ օրենք

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2023թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (03.05.23թ.ՀՕ-150-Ն) /Այսուհետ՝ Օրենք/: Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա” և ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից: Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու

տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Փորձաքննության փուլը սկսվում է փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի լրակազմ փաթեթն էլեկտրոնային տարբերակով նախաձեռնողի կողմից լիազոր մարմին ուղեկցող գրությամբ ներկայացնելու պահից: Փորձաքննական գործընթացի արդյունքով կազմվում է պետական փորձաքննական եզրակացություն՝ Գործընթացի ավարտին տրվում է Պետական փորձաքննական եզրակացություն:

ՇՄԱԳ փորձաքննության ժամկետներն են՝

Ա կատեգորիայի նախատեսվող գործունեության դեպքում՝ մինչև 80 աշխատանքային օր:
Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության դեպքում՝ մինչև 40 աշխատանքային օր:

Փորձաքննության գործընթացների լիարժեքությունն ապահովելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու կամ այլ տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը փորձաքննական գործընթացի ժամկետը կարող է երկարաձգել մինչև 30 աշխատանքային օրով, որի մասին ծանուցում է նախաձեռնողին՝ ծանուցման մեջ նշելով կատարվելիք լրացուցիչ աշխատանքի կամ ձեռք բերվող անհրաժեշտ տեղեկատվության մասին: ՇՄԱԳ-ի փորձաքննության ժամկետում պետական փորձաքննական եզրակացություն չտրամադրվելու դեպքում պետական փորձաքննական եզրակացությունը համարվում է դրական տրամադրված, եթե փորձաքննությունն իրականացվել է սույն օրենքով ամրագրված բոլոր պահանջներին

Հանրային առողջապահության մասին ՀՀ օրենք, սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենք, սույն օրենքով կարգավորվում են կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման և իրականացման, հիվանդությունների իմունականխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների

ազդեցության կանխարգելման (շրջակա միջավայրի հիգիենայի), համաճարակաբանական դիտարկման, արտադրական հսկողության, հանրային իրազեկման, բժշկական ու հանրային առողջապահական գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության, հանրային առողջապահական գիտելիքների ուսուցման, ՀՀ-ում սանիտարահամաճարակային հսկողության և պետական գրանցման ենթակա արտադրանքի (ապրանքների) գրանցման (բացառությամբ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով կարգավորվողի), աշխատանքի հիգիենայի ծառայությունների և հանրային առողջապահական փորձաքննության հետ կապված հասարակական հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հանրային առողջապահության բնագավառում Կառավարության, պետական կառավարման համակարգի մարմինների լիազորությունները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի իրավունքներն ու պարտականությունները, արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում բնակչության պաշտպանության առանձնահատկությունները, առողջության պահպանման իրավունքի իրականացման մեխանիզմներն ու կարգը:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «**ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին**» N 967-Ն որոշում

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք, Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին: Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.): Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.): Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.–ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք, Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004): ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք, Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված

հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք, Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006թ.):

Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման; Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Հողի որակի և ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը սահմանում են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները՝ հողի սանիտարական վիճակի հիգիենիկ գնահատականը, հողի որակի հսկողությունը, հողի սանիտարական վիճակի գնահատման հիմնական ցուցանիշները՝ կախված դրանց ֆունկցիոնալ նշանակությունից, հողի աղտոտվածության աստիճանից կախված հողի օգտագործման առաջարկները:

Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման: Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող

չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր / մինչև 2040թ./ Ռազմավարական ծրագիրն ընկած է Էներգետիկայի բնագավառին առնչվող բոլոր որոշումների կայացման, հարևան երկրների հետ Էներգետիկայի ոլորտին առնչվող հարաբերությունների կառուցման, ավելի գլոբալ Էներգետիկ շուկաներին ինտեգրման և հիմնական գործընկերների հետ հարաբերությունների հետագա զարգացման հիմքում: ՀՀ կառավարությունն Էներգետիկայի բնագավառում իրականացնելու է սոցիալական, բնապահպանական և տնտեսական հավասարակշռված քաղաքականություն, առավելագույնս ներգրավելով բնակչությանն ու գործարարներին սույն ռազմավարության նպատակներին հասնելու համար:

Սույն ռազմավարությունը հիմք է հանդիսանալու Էներգետիկայի բնագավառի ազգային ծրագիր-ժամանակացույցի մշակման համար, որում մինչև 2040թ. ժամանակահատվածի համար սահմանված կլինեն սույն ռազմավարության իրագործումն ապահովող առանձին թիրախային ցուցանիշներ և գործողությունների ցանկ: Էներգետիկայի բնագավառի ազգային ծրագիր-ժամանակացույցը կհաստատվի մինչև 2020թ. ավարտը:

Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, մշակվել են բնապահպանական ուղղվածության բազմաթիվ ռազմավարական, հայեցակարգային և ազգային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կողմից ստորագրվել և վավերացվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ: Ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

Ինչպես նաև՝ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքը, Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը , Լիցենզավորման մասին ՀՀ օրենքը

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավեր է	Ծանոթություն
Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971			Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.
ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
«Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (22.05.2001թ.)»	2003	2003	2003	
Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999

	«Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանց վել է, ՄԱԿ, 1999
0	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ Տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուա1998թ.)	2001	1998	2001	

2. Նախատեսվող գործունեության տարածքի նկարագիրը

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ Օբյեկտը հանդիսանում է հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիր: Այն ունի 8 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկից հազմված հյուրանոցային մասնաշենքից, հանգստյան տնակներ՝ քրթեջներից, բացօդյա լողավազանից, այգուց, սպորտային գոտուց, ավտոկայանատեղից, արհեստական լճից և օժանդակ շինություններից:

Գտնվելու վայրը Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Ծաղկաձոր ք. Մ. Մկրտչյան փողոց 60 հասցե:

Առաջադրանքի տրամադրման հիմք է հանդիսացել իրավունքի պետական գրանցման վկայականը և նախագծի էսքիզը:

Հողամասը նախատեսված է հանգստի համար: Հողամասի չափը 15 հա:

Տարածքը չկառուցապատված է: Հողամասի սահմանը Մհեր Մկրտչյան փողոցից 33.6մ հեռավորության վրա, ըստ գլխավոր հատակագծի, Հավելված 5:

Հողամասին կից առկա են ինժեներական ցանցեր:

Հողամասին կից առկա են երկու կողմից հարևան հողամասեր:

Պատմամշակույթային հուշարձաններ տարածքում չկան:

Ճարտարապետնախագծային պահանջներից են ապահովել ՀՀ Քաղաքաշինության նախարարության 30.01.2014թ թիվ 263 հրամանով նախատեսված նորմատիվային պահանջները:

Կառույցների թույլատրելի բարձրությունը 32մ է առաջին վերգետնյա հարկի զրոյական նիշից:

Կառուցապատման խտության գործակիցը 2.4 (կառույցների մակերես/ հողամաս):

Կառուցապատման տոկոսը 25% (կառուցապատման անջրանցիկ մակերես /հողամաս):

Կանաչապատման տոկոսը 75%:

Ավտոկայանատեղիներ 102 հատ, 46 վերգետնյա, 56 ստորգետնյա

Հեռավորությունը մինչև ճոպանուղի 5կմ, 9 րոպ.

Հեռավորությունը երևանից 54 կմ, 55 րոպ.


Մինչ օդանավակայան հեռավորությունը 65 կմ, 1:15 ժամ.

Ամենամոտ տներից հեռավորությունը 50մ

Հրազդեն գետից հեռավորությունը 500մ

Հ28 հանրապետական նշանակության Զրառատ-Մեղրաձոր-Հանքավան ճանապարհից 380մ, (տես Հավելված 6)

Հողամասի տեղադիրքը



Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտնկվեն ծառեր և թփեր:


Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման ժամանակ:

Արհեստական լճակի տեխնիկական ցուցանիշները:

Լճի հայելու ընդհանուր մակերեսը 8618մ² է, ունի երկրաչափական սեղանի տեսք, առավելագույն լայնությունը 68մ, առավելագույն երկարությունը 132,6 մ է, խորությունը 1-2մ: Տեղադիրքը ներկայացված է գլխավոր հատակագծում (Հավելված 5):

Լճակի հիմնական օգտագործման նպատակը հանգստի կազմակերպումն է, որ պետք է ներառված լինի տարածքի ընդհանուր բարեկարգման կոնցեպտում: Լճակի այլ նպատակներով օգտագործում չի նախատեսվում:

Արհեստական լճակ



Գեոմորֆոլոգիական պայմաններ

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Թեղենիսի արևելյան լանջին: Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1841 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 6 կմ հյուսիս-արևմուտք:

Կլիմա: ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը:

ամառով կլիմա: Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝ ըստ «Հրազդան» օթերևութաբանական կայանի տվյալների;

- Տարեկան միջին ջերմաստիճանը 5.4 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 35°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -22°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 69
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 46
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 500-700մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 2.1մ/վ:
- Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 19մ/վ է, 50 տարվա ընթացքում 22մ/վ
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 92սմ

Երկրաբանություն: ուսումնասիրվող տարածքում տարածված են չորրորդական հասակի ալյուվիալ ծագման նստվածքներ, որոնց արտաքին շերտերը ծածկում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ, էյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ նստվածքները:


Հողոերկրաբանություն: տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Տվյալ տեղամասում մինչև 19 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր բացահայտվել են հորատանցք 1-ում 1.5մ-ից, հորատանցք 2-ում 2.5մ-ից, հորատանցք 3-ում 2.5մ-

ից: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ:



Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի, լաբորատոր ուսումնասիրությունների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերը վերևից-ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 4 շերտերը:

Շերտ-1 հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնով : Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (9ա) I կարգ է:

Շերտ-2 Ավազակավեր շագանակագույն կիսապինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 5-10% պարունակությամբ: Ժամանակակից դելյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33^ա) III կարգ է:

Շերտ-3 Կավ մուգ շագանակագույն, պինդ թանձրությամբ ավազային ենթաշերտերով, տեղ-տեղ խճի և մանրախճի պարունակությամբ, մանրամիջահատիկ, ծանր, հոծ: Էյլուվիալ-Դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն III (8^ա) կարգ է:

Շերտ 4 Այլուվիալ ծագման նստվածքներ ճալաքարային նստվածքներ ավազային ենթաշերտով, ավազակավի, կավավազի լցոնով. մինչև 5% բեկորանյութով: Բեկորային նյութը տարակազմ է, միջին հղկվածության: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (6գ) IV կարգ:

Երկրաբանալիթոլոգիական տվյալների աղյուսակ

Բնական խոնավություն, %	ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ				ԽՏՈՒԹՅՈՒՆ Ը, գ/սմ ³			Ծակոտկենություն, %	Ծակոտկենության գործակից	Խոնավությունը լրիվ ջրիագեցած վիճակում	Խոնավության աստիճանը	Դեֆորմացիայի մոդուլ, տ/մ ²	Ներքին շփման անկյուն, աստ.	Կապակցվածություն, տ/մ ²	Հաշվարկային դիսարբություն , կգ/սմ ²	Ընկրկելիության գործակից, տ/մ ³	Պուասսոնի գործակից	Համամասնության գործակից տ/մ ⁴	Գրունտի անվանումը ըստ ГОСТ-25100-2020
	Հոսունության սահման	Գլանման սահման	Պլաստիկության թիվ	Հոսունության ցուցիչ	Բնական	Գրունտի մասնիկների	Չոր գրունտի												
W	W _L	W _P	I _P	I _L	ρ	ρ _s	ρ _d	n	e	W _{sat}	S _r	E	φ	C	R ₀	K _p	ν	K _h	
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	21	22
28.70	0.495	0.271	0.15	-0.61	1.95	2.69	1.51	28,69	0.585	20.62	0.519	17.5	18°30'	1.35	2.0	2.0×10 ³	0,25	2500	Ավազա կավեր

Գրունտային նմուշների խոնավություն

խոնավությունը որոշվել է համաձայն *ASTM D42216-10* պահանջների և ներյացված է աղյուսակում:

N°N°	Խոնավություն. W%
2	37,22

տեսակարար կշիռը

տեսակարար կշիռը որոշվել է պիկնոմետրիկ եղանակով համաձայն *ASTM D854-02* պահանջների և ներկայացված է աղյուսակում:

N°N°	Ջերմաստիճանային գործակից, K =1 Ջերմաստիճան (°C) = 20
	Խտություն / տեսակարար կշիռ, գ/սմ ³
2	2,71

բնական խտությունը

բնական խտությունը որոշվել է համաձայն *FOCT 5180-2015* նորմատիվային փաստաթղթի պահանջների:

N°N°	Բնական խտություն, գ/սմ ³
2	1,90

Չոր գրունտային խտությունը

Չոր գրունտային և ապարային խտությունը որոշվել է համաձայն *FOCT 5180-2015* նորմատիվային փաստաթղթի պահանջների:

N°N°	Չոր խտություն, գ/սմ ³
2	1,45


Ելնելով գրունտային խոնավության, խտության և տեսակարար կշռի լաբորատոր փորձարկման ցուցանիշներից, համաձայն *FOCT 5180-2015* գրունտային լիցքի նմուշների որոշ ֆիզիկական հատկությունների ստացված հաշվարկային արժեքները ներկայացված են ստորև աղյուսակում:

Գրունտների ֆիզիկական հատկությունների աղյուսակ

Նմուշառման հորատանցք	Ծակտակներնությունը %	Ծակտակներնությունը գործակից	Խոնավությունը լիով ջրհագեցած	Խոնավության աստիճանը
	n	e	W_{sat}	S_r
2	35,50	0,756	36,07	0,815

Աթերբերգի սահմանների որոշում

Ֆիզիկամեխանիկական որոշ ցուցանիշների պահանջներից ելնելով համաձայն *ASTM D4318* նշված մեթոդաբանության Աթերբերգի սահմանների արժեքներն ներկայացված են ստորև:




հորատանցք	Հոսունության սահմանը, LL	Պլաստիկության սահմանը, PL	Պլաստիկության ինդեքս, PI	Գրունտի տեսակը ըստ ASTM D4318
2	58,25	29,88	28,37	CH

Համաձայն նաև ГОСТ 5180-2015 պահանջների որոշվել է նաև պլաստիկ հոսունության ցուցիչը IL

Նմուշաման հորատանցք	Հոսունության ցուցիչը IL
2	-0,13

Գրունտների հատիկաչափական կազմ

հատիկաչափական կազմը՝ մաղախին անալիզ և արեոմետրիկ թեսթ (H51 հիդրոմետրով), իրականացվել է համաձայն ASTM C136 և ASTM D422 ստանդարտի պահանջների: Փորձարկման արդյունքներից ելնելով տրվել է նաև գրունտների դասակարգումը համաձայն ASTM D 2487 ստանդարտի:



Չոր նմուշի քաշը, գր				300			
Մաղային անալիզ և արժեմետրիկ թեստ							
Մաղային անալիզ	Հատիկի չափը, մմ	Մաղվածի քանակը, %	Գրունտի քանակը մաղի վրա, գր	Քանակը ընդհանուր զանգվածում, %	Գրունտի քանակը մաղի վրա, գր	Մաղվածի քանակը, %	Քանակը ընդհանուր զանգվածում, %
				100.00			
	50.0	0,00	0	100,00	0,0500	12,33	82,53
	37.5	0,00	0	100,00	0,0365	5,16	77,37
	25.0	0,00	0	100,00	0,0260	1,29	76,08
	19.0	0,00	0	100,00	0,0171	6,45	69,63
	12.5	0,00	0	100,00	0,0104	9,03	60,61
	9.5	0,00	0	100,00	0,0077	10,32	50,29
	6.3	0,00	0	100,00	0,0058	12,89	37,40
	4.75	0,00	0	100,00	0,0030	14,18	23,21
	2.36	0,10	0,3	99,90	0,0013	11,61	11,61
	1.0	0,33	0,98	99,57	0,0010	11,60	-
	0.6	0,45	1,35	99,12	SC		
	0.425	0,89	2,68	98,23	Clayey sand		
	0.3	0,46	1,38	97,77			
	0.15	1,37	4,12	96,40			
	0.075	1,54	4,62	94,86			

Ընդհանուր մասնաբաժինը, %		
Խիճ և մանրախիճ, %	Ավազ, %	Կավ և փոշի, %
0,00	5,14	94,85

D10:	0,0013	Cu:	7,69
D30:	0,004	Cc:	1,231
D60:	0,01		

Գրունտային ուռչելիությունը

ուռչելիության հատկությունը և ուռչման ցուցանիշը որոշվել է համաձայն ASTM D 4546-08 ստանդարտի պահանջի:

հորատանցք	Ուռչելիությունը	
	մմ	Ուռչելիության բնութագիրը
2	0,082	Թույլ ուռչող


Դեֆորմացիայի մոդուլի որոշման հետազոտություններ

Հետազոտվող գրունտի դեֆորմացիայի մոդուլի (E) որոշման նպատակով գրունտային նմուշը վերցվել է օղակների մեջ, այնուհետև տեղադրվել կոմպրեսիոն սարքում, տալով նմուշներին մինչև $\sigma = 0.3$ ՄՊա ուղղաձիգ բեռնվածք: Գրունտների կոնսոլիդացիոն բնութագրիչների որոշման հետազոտությունները կատարվել են համաձայն ԳՕՏ 12248-2010 պահանջների:

Կողային ձևափոխություն (Պուասոնի) գործակիցը	$\nu = 0.25$	$\beta = 1 - [2\nu^2 / (1 - \nu)] = 0.833$
--	--------------------------------	--

№	Ուղղաձիգ լարում P, ՄՊա	Տեղափոխություն	Հարաբերական սեղմվածություն	Ծակուկենության գործակից
		Δh_i , մմ	$\epsilon = \Delta h_i / h$	$e_i = e_0 - \epsilon_i(1 + e_0)$
1	0.5	0,07	0,0020	0,865
2	0.1	0,135	0,0039	0,862
3	0.2	0,335	0,0097	0,851
4	0.3	0,515	0,0148	0,841
5	0.3	0,52	0,0150	0,841

Ուղղաձիգ լարում P, ՄՊա	Հարաբերական սեղմվածություն $\epsilon_i = a + b \cdot \ln p$	Ծակուկենության գործակից $e_i = e_0 - \epsilon_i(1 + e_0)$	Դեֆորմացիայի մոդուլ $E_{0.5 \cdot \rho_i + 1}$, ՄՊա	Խտացման գործակից a, ՄՊա ⁻¹	$m_k = 5,4$ $E = m_k \times E_{0.1-0.2}$ ՄՊա
0.5	-0,0343	0,933			
0.1	-0,0187	0,904	2,7	0,583	
0.2	-0,0031	0,875	4,0	0,389	
0.3	0,0060	0,858	5,2	0,301	
0.3	0,0060	0,858	5,2	0,301	



Նստեցման փորձարկումների արդյունքներից և համաձայն նորմատիվային փաստաթղթերի պահանջների կարելի է եզրակացնել, որ ներկայացված կավային գրունտները՝ **թույլ նստող են:**

Սահքի դիմադրության փորձարկում

Գրունտի սահքի դիմադրության փորձարկում արդյունքների որոշման համար չքայքայված կազմության նմուշները փորձարկվել են համաձայն ընդունված ստանդարտների պահանջի հորիզոնական առանցքային կտրմամբ:

Ազդող քաշը, կգ	Ուղղահայաց բեռնվածքը, σ ՄՊա	Կտրմանը դիմադրություն τ , ՄՊա	tg ϕ	Կապակցվածությունը C, ՄՊա	Ներքին շփման անկյունը, աստ. փ
1.0	0,08	0.1	0.447	0.0219	21°19'
2.0	0,155	0.2			
3.0	0,195	0.3			

Լաբորատոր պայմաններում հետազոտված գրունտների ֆիզմեխ. հատկության ցուցանիշներ

հորատանցք	Ցուցանիշներ				
	Հաշվարկային դիմադրություն, կգ/սմ ²	Ընկրկելիության գործակիցը, տ/մ ³	Պոասսոնի գործակիցը	Համամասնականության գործակիցը, տ/մ ⁴	Դեֆորմացիայի մոդուլ, ՄՊա
	R ₀	k _ը	υ	K	E
< 2	2,2	3000	0,25	2000	19,6

Լաբորատոր պայմաններում հետազոտված գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների ընդհանրացված աղյուսակ

հորատանցք	Բնական խոնավություն	ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ		ԽՏՈՒԹՅՈՒՆԸ, գ/սմ ³			Ծակուկենություն, %	Ծակուկենության գործակից	Խոնավությունը լիվ ընդհանուր ջրի հազվեցած վիճակում	Սղոցված խոնավության աստիճան	Գրունտների անվանումը
		Պլաստիկությունը լիվ	Հոսունության ցուցիչ	Բնական վիճակում	Գրունտի մասնիկների	Չոր գրունտի					
	W	I _p	I _L	ρ	ρ _s	ρ _d	n	e	W _{sat}	S _r	Ըստ FOCT 25100-2020
1	4	7	8	9	10	11	12	13	14	15	16
< 2	37,22	28,37	-0,13	1,90	2,71	1,45	35,50	0,756	36,07	0,815	պինդ կավային գրունտ

Խամարը	Վայրը	Բնական խոնավություն մ.մ.	ԽՏՈՒԹՅՈՒՆԸ, գ/սմ ³			Ծակոտկենու- թյուն,%	Ծակոտկենության գործակից	Խոնավությունը լրիվ ջրիագեցած վիճակում	Ջրահագեցվածության ստճակագ	Ներքին շփման անկյուն	Տեսակարար կապակցվածություն	Դեֆո- ր- մացի այի մոդուլ, ՄՊա	Հաշ- վար կային դիմա- դրու- թյուն, ՄՊա	Ընկրկ ե լիու- թյան գործա կից, տ/մ ³	Պուա ս- տնի գործ ա-կից	Գրունտների տեսակը ГОСТ 25100- 2020
			ռնա- կան Վիճա- կում	գրուն- տի մասնի կ-ների	գրուն տի կմա խ-քի											
			W	ρ	ρ _s											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
3	Ծաղկաձոր	0.02 64	1.80	2.87	1.61	32.6	0.484	0.171	0.13 3	36.5 0°	0.00 4	43.0	0.4	6000	0.27	Ճալաքարային գրունտ

Բնական պաշարներ

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝


Հողերի տեսակը	Միավորը /հա/
բնակավայրերի փաստացի սահմաններում ընդգրկված	532.74
արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության	148.73
էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների	99.16
հատուկ պահպանվող տարածքների	6672.15
գյուղատնտեսական նշանակության	23116.89
անտառային /ազգային պարկ/	8700.94
Ջրային	148.39

Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, դրանք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ ապարների վրա զարգացած են հողերը, որոնք տափաստանացված շականակագույն հողերի հետ միասին մոզայիկ հանդիպում են ողջ անտառային գոտում: Ենթալայան գոտում զարգացած են լեռնամարգագետնային սևահողերը: Այնտեղ որտեղ տարածքը էրոզացված չէ, հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40 սմ:

Անտառները հիմնականում ունեն բնական ծագում: Երկրաբանական կառուցվածքը բարդ ու բազմազան է: Այստեղ հանդիպում են գրեթե բոլոր երկրաբանական ժամանակաշրջանների ապարներ: Սակայն առավել տարածված են յուրայի, վերին կավճի, էոցենի, օլիգոցե-միոցենի ու չորրորդական հասակի ապարների գոյացումներ:

Տարածքում կան մետաղային և ոչ մետաղային բազմաթիվ և բազմատեսակ հանքավայրեր: Օրինակ. մետաղներից՝ ծարիրի, պղնձի, գունավոր ու թանկարժեք այլ տարրերի, ոսկու հանքավայր, իսկ ոչ մետաղային հանածոներից՝ կրաքար, ավազ,

դրվումիտ, խիճ, գլաքար, կավ, պորֆիրիտ, ավազաքար և այլ շինանյութերի հանքավայրեր:



Ծաղկածոր քաղաքային համայնքը և նրան հարող տարածքն աչքի է ընկնում գեղատեսիլ լանդշաֆտով, նշանակալից ոեկրեացիոն ռեսուրսներով:





Ռելիեֆը բարդ է, հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 1.2 կմ/կմ²: Հովտածորակային ցանցի խտությունը 3.0 հատ/ կմ² է: Մակերևույթի թեքության անկյունը կազմում է 4-120:



Նախատեսվող գործունեության տարածքի մոտ 40հազ մ² անտառածածկ է 20հազ մ² թփածածկ: Ծաղկածորն ունի յուրահատուկ բուսական աշխարհ: Հիմնական ծառաթփային տեսակները, որոնք առկա են տարածքում.

Հիմնական ծառատեսակները

1. **Կաղնի (Quercus)** Հանդիպում է տարբեր ենթատեսակներով:

2. **Հացենի (Carpinus)** Լայնատերև:
3. **Բոխի (Fagus orientalis)** Շատ տարածված է խոնավ և ստվերային վայրերում:
4. **Թխկի (Acer)** Գունազեղ տերևներով:
5. **Եղևնի (Abies)** սոճազգիների ընտանիքի մշտադալար, ասեղնատերև ծառեր

	
<p>Կաղնի</p>	<p>Բոխի</p>
	
<p>Հացենի</p>	<p>Թխկի</p>

	
Եղևնի	Մարենի

Թփուտները իրենցից ներկայացնում են գաճաճ ծառաթփերի տարբեր տեսակներ՝ որոնցից ամենատարածվածը է Մասուր (*Rosa canina*) վայրի վարդերի տեսակներից:



Ֆոտոպատկերներ տարածքից:

Նախատեսվող գործունեության ընթացքում նախանական պլանավորվում է մոտ 40 ծառաթփերի կտրում, որոնց փոխարեն ձեռնարկողը համայնքի կողմից հատկացված վայրում կիրականացնի ծառատունկ հինգապատիկ ավել քանակով և կիրականացնի դրա խնամքը, որի համար համայնքի հետ նախագծի իրականացման սկզբնական փուլում կկնքվի պայմանագիր:

Կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել սիզամարգերի և արահետների կառուցում համաձայն կանաչապատման


նախագծի: Անտառապատ տարածքներում կստեղծվի միայն արահետ՝ հողային անցումով, առանձ քարի և բետոնի կիրառման:

Ծաղկածորի համայնքապետարանի կողմից հատկացված վայրում հատվող ծառերի հնգապատիկի չափով՝ մոտ 200 տեսակ, կիրականացվի անտառապատման աշխատանքներ և դրա հետագա խնամք:

Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Ենթակառուցվածքներ


Երևանի հետ կապված է 51 կմ բարեկարգ ասֆալտապատ մայրուղով: Մայրաքաղաքի հետ հաղորդակցությունն ավտոմոբիլային է, մասնակիորեն՝ երկթուղային: Ռեսուրսների հիմնական տեսակներն են ռեկրեացիոն և պատմամշակութային ռեսուրսները, անտառային ֆոնդի հողերը:



Համայնքի սոցիալօտնտեսական բնութագիրը

Համայնքում գերիշխող են հանգստի կազմակերպման, սպորտի, տուրիզմի, առողջարարական և սպասարկաման ծառայությունները: Ծնորհիվ կազդուրիչ անտառների և բուժիչ կլիմայի, գեղատեսիլ բնապատկերների և լեռնագրական պայմանների առանձնահատկությունների, Ծաղկաձորը համարվում է հանրապետության ամբողջ տարի գործող կարևորագույն հանգստավայրերից մեկը և, ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 1-ի N95-Ա որոշմամբ այն հայտարարված է որպես Զբոսաշրջային կենտրոն:

Ծաղկաձոր համայնքի բնակչություն՝ 7243: Ծաղկաձոր համայնքում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝ Ծաղկաձոր, Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ:



Աշխարհագրական դիրքը:

Ծաղկածոր համայնք (Կոտայքի մարզ) հարմարավետ կուրորտային համայնք է՝ 7243 բնակչությամբ: Այն գտնվում է Թեղենիս լեռան արևելյան լանջին, ծովի մակարդակից միջինը 1840մ բարձրության վրա: Մայրաքաղաք Երևանից Ծաղկածոր համայնքը գտնվում է 60 կմ հեռավորության վրա: Ծաղկածորից հյուսիս և հարավ ձգվող զառիթափ լեռնաշղթաները ծածկված են անտառներով:

ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔ

Մակերեսը - 1618.29

բնակչության թիվը - 1540

ներկայիս անվանումը - Ծաղկածոր

պատմական անվանումները - Կեչառոյք, Դարաչիչակ, Ծաղկունյաց ձոր հեռավորությունը մայրաքաղաքից - 50կմ

բնակչության կազմը - հայեր, ռուսներ, եզդիներ

կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց, մսուր մանկապարտեզ, արվեստի դպրոց

արտադրական ձեռնարկություններ - չկա

բնակչության հիմնական զբաղմունքը - զբոսաշրջություն/հյուրատներ, հյուրանոցներ/:

Ժողովրդագրություն: Համայնքի բնակչության թիվը կազմում է 7243 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 52.69 տոկոսը:

Համայնքի բնակչությունը

	Նարիքային խմբեր	Ընդամենը	Արական	Իգական
1	0-17 տարեկան	1380	725	655
2	18-62 տարեկան	4971	2691	2280

3	63 տարեկան և ավելի	893	403	490
	Ընդամենը	7243	3819	3425

Համայնքի զարգացման տեսլական; համաձայն Ծաղկաձոր համայնքի 2022-2026 թվականներ զարգացման ծրագիր համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող զարգացող զբաղվածությամբ աչքի ընկնող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն: Զարգացման ծրագրի ընդունման և իրականացման հիմնական նպատակներն են համայնքի ազգաբնակչության կյանքի որակի բարելավումը և Ծաղկաձոր համայնքը միջազգային չափանիշներին համապատասխան զբոսաշրջային կենտրոնի վերածելը, որը կնպաստի՝

- Քաղաքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը և բարելավմանը, լիովին կլուծվի քաղաքի ազգաբնակչության զբաղվածության խնդիրը
- Համայնքի սեփական եկամուտների աճ արտահայտված տոկոսներով

2022թ	2023թ	2024թ	2025թ	2026թ
6	7,9	6,4	8,5	5,5

- Ներքին և միջազգային զբոսաշրջության զարգացմանը, ինչպես ձմեռային, այնպես էլ այլ սպորտաձևերի զարգացմանը, ինչի արդյունքում կգրանցվի բնակիչների թվի փոփոխություն/չպայմանավորված բնական աճով/
- Բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկման մակարդակի և որակի բարձրացմանը, քաղաքի կենցաղային և էկոլոգիական խնդիրների լուծմանը
- Մշակութային կյանքի աշխուժացմանը, համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպմանը:

Նախատեսվող գործունեությունը համահունչ է համայնքի զարգացման ծրագրերի հետ, ուստի ակնկալում ենք այս նախագծի բարեհաջող ներդրման արդյունքում ունենալ միջազգային հանրաժանորթ **Radisson Hotel Group** բրենդի ներքո գործող հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիր Ծաղկաձոր համայնքում:

Բնակլիմայական պայմանները

Ծաղկաձորը գտնվում է բարձրադիր լեռնային գոտում, այդ իսկ պատճառով ջերմաստիճանը ամռանը այստեղ չի գերազանցում +26 աստիճանը, իսկ ձմռանը +5: Ձմռանը կլիման նույնպես մեղմ է: Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում՝ տարածքի կլիման բնութագրվում է որպես բարձրլեռնային հատուկ՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ ամառով և չափավոր ցուրտ, անհողմ, ձյունառատ ձմեռով: Տեղումների տարեկան քանակը 789մմ է, որից 506 մմ՝ տարվա տաք սեզոնում (ապրիլ-հոկտեմբեր):

Օդը մշտապես չոր է, այդ պատճառով ցրտերը այնպես էլ ուժեղ չեն զգացվում: Ձմռանը սովորական ջերմաստիճանը լինում է օրվա ընթացքում +5, գիշերը մինչև -20: Եղանակը փոխվում է անկանխատեսելիորեն: Սովորաբար Ծաղկաձորում դիտվում է արևային եղանակ: Արևային օրերի քանակը տարեկան կազմում է 230-260 օր: Սակայն ձմռանը հաճախակի դիտվում են տեղումներ ձյան տեսքով: Ընդ որում, սովորաբար մինչև 0.5-1մ միանգամից և այնուհետև նորից լինում է արևային օր: Սովորաբար արևոտ օրերի 70%-ը քամի չի լինում, իսկ 30% դիտվում է քամի: Տարածքում գերակշռում են արևմտյան քամիները: Քամու միջին արագությունը հիմնականում տատանվում է 0.1-3.0մ/վրկ սահմաններում:

Համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեյի նախագահի հաստատած ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական Կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերի:

Աղյուսակ 1.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների													ամենացուրտ ամսվա		ամենաշոգ ամսվա	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան	Միջին ամսեկան	Միջին ամսեկան ϕ 15	Միջին ամսեկան	Միջին ամսեկան ϕ 15
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	69	68	52

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն մմ}}$													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հանքավան	54	57	69	89	121	104	68	46	44	71	55	45	823	280	543
	38	39	44	69	86	57	42	36	40	52	44	40	86		

Բնակավայրի անվանումը	Ձնածածկույթ			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Հրազդան	132	129	310	92

Աղյուսակ 1.4. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ Միջին արագությունը, ուղղությունների մ/վ								Անդրորի կրկնելի- ությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունները հունս- օգոստոս ամիսներին, մ/վ	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին մ/վ	Գերակշռող ուղղությունները դեկտեմբեր-փետրվար ամիսներին, մ/վ	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ-Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1.9	Արլ	2.9	Արմ	2.4
		2.3	2.4	2	1.4	1.9	2.3	2.4	1.7						
	ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1				
		2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0						
	հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8				
		3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2						
	հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7				
		2	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0						

Աղյուսակ 1.5. . Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիր

N	Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Կլիմայական բնութագիր
3	Տուրտ	1600-ից ավել	Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժ 15 ին) 45 60%, քամու միջին արագությունը 3.0 6.0 մ/վ
	Լեռնային շրջաններ՝		Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին 5... 12°C, հարաբերական խոնավությունը (ժ 15 ին) 70% և ավելի, քամու միջին արագությունը 5.0 7.0 մ/վ

Աղյուսակ 1.7. Արեգակնային գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթման հաշվարկային մեծությունները (Վտ/մ²) հորիզոնական մակերևույթի վրա՝ անամպ երկնքի պայմաններում


Ամիսներ	Աշխարհագրական լայնություն, ° հս. լ.		
	38	40	42
1. Հունվար	86944	81111	73889
2. Փետրվար	120000	113889	106944
3. Մարտ	163056	158056	153056
4. Ապրիլ	208889	206111	201944
5. Մայիս	246111	245000	243889
6. Հունիս	263056	263056	263889
7. Հուլիս	256944	256944	256944
8. Օգոստոս	225000	223056	221111
9. Սեպտեմբեր	183889	180000	175000
10. Հոկտեմբեր	138889	133889	126944
11. Նոյեմբեր	98056	91944	86111
12. Դեկտեմբեր	78889	73056	66111

Աղյուսակ 1.6. Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ, աստիճան


(տվյալները որոշվում են յուրաքանչյուր ամսվա 15-ի կեսօրվա համար)

Հ/Հ	Աշխարհագրական լայնություն, ° հս. լ.	Բարձրությունն ըստ ամիսների, °											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1.	38	30.7	39.0	49.7	61.6	70.7	75.3	73.6	66.3	55.3	43.7	33.7	28.8
2.	40	28.7	37.0	47.7	59.6	68.7	73.3	71.6	64.3	53.3	41.7	31.7	26.8
3.	42	26.7	35.0	45.7	57.6	66.7	71.3	69.6	62.3	51.3	39.7	29.7	24.8


Օդային ավազան: Մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: Ծաղկաձոր համայնքի մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող են ունենալ հիմնականում տրանսպորտային միջոցների արտանետումները:




Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 14 դիտակետ և 1 դիտակայան: 2023 թվականին Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Շաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Շաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Շաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Նախորդ տարվա համեմատությամբ 10%-ով աճել են ազոտի երկօքսիդի, 7%-ով՝ ծծմբի երկօքսիդի, 4%-ով՝ փոշու կոնցենտրացիաները: Քաղաքի

2. Անվտանգության տեխնիկական միջոցներ

- Աշխատանքի անվտանգության ապահովման նպատակով կիրառվում են սարքավորումների, մեքենաների և գործիքների տեխնիկական ստուգումներ:

- Տեխնիկական պետք է պարբերաբար անցնի տեխնիկական սպասարկում՝ խուսափելու վթարներից ու անսարքություններից:

3. Աշխատանքային վթարների և վտանգների կանխարգելում

- Աշխատանքի վայրում պետք է սահմանվեն վտանգավոր գոտիներ և հստակեցվեն աշխատանքային կանոնները:

- Պետք է ապահովվեն վթարային իրավիճակների կառավարման պլաններ, որոնք ներառում են տարհանման ուղիներ, առաջին օգնության տրամադրման միջոցներ և շտապօգնության ծառայությունների հետ կապ:

4. Աշխատողների ուսուցում և պատրաստվածություն

- Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների վերաբերյալ պարտադիր ուսուցում և վերապատրաստում:

- Կազմակերպությունը պետք է ապահովի իր աշխատակիցներին հրահանգավորում և ցուցումներ՝ կապված վտանգավոր պայմաններում աշխատելու հետ:

5. Աշխատանքային միջավայրի մոնիտորինգ և վերլուծություն

- Պետք է պարբերաբար կատարվեն աշխատանքային միջավայրի գնահատումներ՝ ապահովելու անվտանգ պայմանների պահպանումը:

- Պետք է վերլուծվեն վթարներն ու վտանգավոր դեպքերը՝ ապահովելու համար, որ նմանատիպ դեպքերը չեն կրկնվի:

Աշխատանքի պաշտպանությունը կարևոր է ոչ միայն աշխատողների ֆիզիկական առողջության ապահովման համար, այլև ընդհանուր արտադրողականության և աշխատանքի որակի բարձրացման համար: Առանց պատշաճ անվտանգության միջոցառումների, վթարները կարող են հանգեցնել արտադրության դադարեցմանը, ինչը կվնասի նախատեսվող գործունեություն իրականացնող կազմակերպությանը թե՛ ֆինանսապես, թե՛ իր համբավով:

Արդյունավետ աշխատանքի պաշտպանության համակարգը ապահովում է ոչ միայն ռիսկերի նվազեցումը, այլև աշխատողների վստահությունը և աշխատավայրի անվտանգությունը:

Արտակարգ իրավիճակների կառավարում

Նախատեսվող գործունեության ընթացքում արտակարգ իրավիճակները կարող են ծագել տարբեր պատճառներով՝ տեխնիկական անսարքություններից, բնական աղետներից կամ մարդկային սխալներից: Այս իրավիճակները կարող են առաջացնել վթարներ, վնասվածքներ և նախազժի դադարեցում: Արտակարգ իրավիճակների կառավարման արդյունավետությունը շատ կարևոր է՝ աշխատողների և այլ անձանց անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև նախազժի ամբողջականությունը պահպանելու համար:

Արտակարգ իրավիճակների հավանական ռիսկերն են՝

1. Տեխնիկական վթարներ

- Սարքավորումների անսարքություն. Շինարարական մեքենաների և սարքավորումների տեխնիկական անսարքությունը կարող է հանգեցնել վթարների: Օրինակ՝ վերամբարձ մեքենաների խափանումը, էլեկտրական սարքերի խաթարումը:

- Շենքերի փլուզում. Եթե շինարարական աշխատանքները սխալ են կատարվում կամ նյութերը անորակ են, կարող է առաջանալ շենքերի կամ կառույցների փլուզման վտանգ:

2. Բնական աղետներ

- Երկրաշարժեր, փոթորիկներ, հեղեղումներ. Բնական աղետները կարող են լուրջ վնաս հասցնել նախագծին: Օրինակ՝ հողի շարժման հետևանքով կարող են փլվել կառույցները, իսկ ուժեղ քամիները կարող են վտանգել բարձրության վրա աշխատող աշխատողներին:

- Ջրեր սելավահոսքեր և փլուզումներ. Եթե շինարարական աշխատանքների տարածքում հանկարծակի հեղեղումը կամ հողերի սողքը առաջանա կարող են լուրջ ռիսկեր առաջանալ:

3. Հրդեհներ

- Շինարարական նյութերը (օրինակ՝ փայտ, քիմիական նյութեր) կարող են հրդեհավտանգ լինել: Աշխատանքների ընթացքում առաջացող կայծերը կամ էլեկտրական սարքավորումների անսարքությունը կարող են առաջացնել հրդեհ:

4. Աշխատանքի ընթացքում վնասվածքներ և մահեր

- Վատ կազմակերպված աշխատանքային պայմանները կամ անձնական պաշտպանիչ միջոցների բացակայությունը կարող են հանգեցնել աշխատողների վնասվածքների կամ մահվան՝ օրինակ՝ ընկնում բարձրություններից, բեռների փլուզում, սարքավորումների հետ աշխատելու ժամանակ սխալ օգտագործման հետևանքով:

5. Վտանգավոր նյութերի արտահոսք

- Քիմիական նյութերը կամ գազերը, որոնք օգտագործվում են շինարարական աշխատանքներում, կարող են արտահոսել, ինչը լուրջ վտանգ է ստեղծում ինչպես աշխատողների, այնպես էլ շրջակա միջավայրի համար:

Արտակարգ իրավիճակների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հստակ պլան և միջոցառումներ, որոնք կօգնեն կանխել, պատասխանել և վերականգնել ցանկացած նման իրավիճակ:

1. Վտանգների գնահատում

- Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, անհրաժեշտ է կատարել ռիսկերի գնահատում՝ պարզելու հնարավոր արտակարգ իրավիճակները:

- Այս ռիսկերի հիման վրա մշակվում է արտակարգ իրավիճակների պլան, որը կներառի վթարային արձագանքման մեխանիզմներ:

2. Արտակարգ իրավիճակների պլանավորում

- Մշակվում են տարհանման ուղիներ և ծրագրեր, որոնք պետք է լինեն պարզ, հասկանալի և հասանելի բոլոր աշխատողներին:

- Տեղադրվում են հրշեջ համակարգեր, առաջին օգնության կայաններ, և այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման համար:

3. Արտակարգ իրավիճակներում աշխատողների ուսուցում

- Աշխատողները պետք է անցնեն համապատասխան ուսուցում՝ արտակարգ իրավիճակներում արձագանքելու և տարհանման գործողությունների համար:

- Պարբերաբար պետք է կազմակերպվեն վարժանքներ՝ արտակարգ իրավիճակների պայմաններում:

4. Մշտական մոնիտորինգ և վերանայում

- Արտակարգ իրավիճակների պլանը պետք է պարբերաբար վերանայվի և արդիականացվի՝ ելնելով նոր վտանգներից և տեխնիկական փոփոխություններից:

- Շինհրապարակը պետք է մշտապես մոնիտորինգի ենթարկվի՝ կանխելու վտանգավոր իրադարձությունները:

5. Համագործակցություն արտակարգ իրավիճակների պատասխանատու պետական ծառայությունների հետ

- Անհրաժեշտ է մշտապես համագործակցել հրշեջ ծառայությունների, բժշկական անձնակազմի և փրկարար ծառայությունների հետ՝ արտակարգ իրավիճակներում արագ արձագանք ապահովելու համար:

Արտակարգ իրավիճակներում արձագանքման քայլեր

1. Արագ տարհանում

- Վտանգավոր իրավիճակների ժամանակ աշխատողները պետք է արագորեն դուրս բերվեն անվտանգ գոտիներ՝ ըստ տարհանման պլանի:

2. Առաջին օգնության տրամադրում

- Վնասված աշխատողներին պետք է տրամադրվի առաջին օգնություն՝ մինչև բժշկական անձնակազմի ժամանումը:

3. Հրդեհների մարում

- Պետք է օգտագործվեն տեղադրված հրշեջ միջոցները՝ հրդեհների արագ մարելու համար:

4. Աղետի վերլուծություն և վերականգնում

- Արտակարգ իրավիճակից դաքում պետք է իրականացվի վերլուծություն՝ հասկանալու դեպքի պատճառները և ապահովելու, որ նմանատիպ իրավիճակներ չեն կրկնվի:

Արտակարգ իրավիճակների ճիշտ կառավարումը ոչ միայն նվազեցնում է վնասները և ռիսկերը, այլև ապահովում է շինարարական նախագծի անխափան իրականացումը, ինչը կարևոր է ինչպես աշխատողների, այնպես էլ նախագծի ներդրողների համար:

4. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատում

Շինարարության ընթացքում Ջրօգտագործման պայմանները

Նախատեսում են ջրային ռեսուրսների արդյունավետ և պատասխանատու կառավարում, որի նպատակն է նվազեցնել ջրի վատնումը, կանխել անպատակ օգտագործումը և աղտոտումը, ապահովել շրջակա միջավայրի պաշտպանությունը: Այս պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ստանդարտներով ու կարգավորումներով, որոնք շինարարական նախագծի տարբեր փուլերում կիրառվում են՝ սկսած նախնական պլանավորումից մինչև շինարարական աշխատանքների ավարտը:

Ջրօգտագործման հիմնական ուղղությունները շինարարության ընթացքում

- Տեխնիկական ջուր տեխնոլոգիական նպատակներով, ինչպիսիք են՝ նյութերի խառնուրդներ պատրաստելը (բետոն), փոշու և աղտոտվածության վերահսկումը, ինչպես նաև տեխնիկայի և մակերևույթների մաքրումը:
- Խմելու ջուր կոմունալ կենցաղային նպատակներով, ինչպիսիք են՝ աշխատողների կոմունալ կենցաղային պայմանների ապահովում, խմելու և սննդի պատրաստման ապահովման համար

Տեխնիկական և խմելու ջրի տարանջատում

- Տեխնիկական և խմելու ջրերը պետք է տարանջատվեն՝ խուսափելու համար խմելու ջրի պաշարների վատնումից:

Ջրի աղբյուրների պահպանություն

- Շինարարության ժամանակ անհրաժեշտ է խուսափել ջրային աղբյուրների աղտոտումից՝ անկախ նրանից, դրանք գետեր են, լճեր, ստորերկրյա ջրեր, թե այլ ջրային մարմիններ:

- Հատուկ պետք է ուշադրություն դարձվի շինհրապարակի տարածքում ջրահեռացման համակարգերին և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ջրերի մեջ շինարարական նյութերի կամ քիմիական նյութերի մուտքը կանխելու համար:

- Արտահոսող ջրերը, որոնք օգտագործվում են շինարարական գործունեության ժամանակ, պետք է ենթարկվեն մաքրման՝ նախքան դրանք շրջակա միջավայր ուղարկելը: Օրինակ՝ պետք է օգտագործել ֆիլտրացիոն համակարգեր և ջրային մաքրման կայաններ՝ շինարարությունից առաջացած աղտոտվածությունը հեռացնելու համար:

- Ջրահեռացման համակարգերը պետք է տեղադրվեն ճիշտ՝ կանխելու համար հողի էրոզիան և ջրային աղբյուրների աղտոտումը:

- Շինարարության ընթացքում օգտագործվող քիմիական նյութերը, ներկերը, բետոնային խառնուրդները և այլ վտանգավոր նյութերը պետք է պահվեն ու օգտագործվեն այնպես, որ դրանք չհասնեն ջրային աղբյուրներին:

- Քիմիական նյութերի պահեստները պետք է պատշաճ կերպով մեկուսացված լինեն և ապահովվեն վթարային արտահոսքի կանխարգելման սարքավորումներով:

- Շինարարության ընթացքում օդում առաջացած փոշու վերահսկման համար հաճախ կիրառվում է ջուր՝ փոշու քանակը նվազեցնելու նպատակով: Սակայն, պետք է խնայողաբար օգտագործել ջուրը՝ առանց ավելորդ ծախսերի:

Օրենսդրություն և թույլտվություններ

Շինարարության ընթացքում ջրի օգտագործման կարգավորումը ենթակա է օրենքների և կանոնակարգերի, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ: Օրենսդրությամբ նախատեսվում է.

- Ջրի օգտագործման և մաքրման համար համապատասխան թույլտվությունների ստացում:

- Շրջակա միջավայրի պաշտպանության օրենքների պահպանում:

- Ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումների կիրառման պարտավորություններ:

Այս պայմանների պահպանումը թույլ է տալիս ապահովել ջրային ռեսուրսների կայուն կառավարումը, նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և նպաստել շինարարական գործընթացի արդյունավետությանը՝ պահպանելով բնապահպանական ստանդարտները:

Տեխնիկական նպատակներով ջրօգտագործման հիմնական նորմատիվային պահանջները

- o Բետոնի պատրաստման ժամանակ ջուրը օգտագործվում է խառնուրդի մեջ և կախված է բաղադրության բաղադրիչներից, բետոնի տեսակից և նախագծի պահանջներից: Միջինացված, մեկ խորանարդ մետր բետոն պատրաստելու համար օգտագործվում է միջինում 150-200 լիտր ջուր:
- o Հողային աշխատանքների ընթացքում ջրի պահանջը կարող է զգալիորեն տատանվել՝ կախված հողի տեսակներից, աշխատատարությունից և եղանակային պայմաններից: Հողը կոմպակտացնելու համար միջինում ծախսվում է 5-20 լիտր ջուր մեկ քառակուսի մետրի համար:
- o Շինարարական տեխնիկայի սպասարկման և լվացման, խոշոր սարքավորումների լվացման համար ծախսվում է 200-500 լիտր ջուր՝ կախված յուրաքանչյուր տեխնիկայի չափերից:
- o Շինարարության ընթացքում ջուրը օգտագործվում է օդում փոշե մասնիկները նվազեցնելու համար: Շինհրապարակների վրա, հատկապես՝

չոր շրջաններում, օգտագործվում է մոտ 1-3 լիտր ջուր մեկ քառակուսի մետրի համար՝ փոշու վերահսկման նպատակով:

Կոմունալ կենցաղային նպատակներով ջրօգտագործման նորմանատիվային պահանջները համելու և կենցաղային օգտագործում (մոտավոր՝ 3-5 լիտր/օր)

- համելու ջրի և սննդի պատրաստման համար օրական օգտագործվում է մոտ 3-5 լիտր ջուր մեկ անձի համար:
- Անձնական հիգիենա (մոտավոր՝ 50-100 լիտր/օր), նորման ներառում է ցնցուղ, լոգանք, ձեռքերի լվացում, և այլ հիգիենիկ գործողություններ:
- Սանհանգույց և զուգարան (մոտավոր՝ 30-50 լիտր/օր)
- Ամենօրյա մաքրություն (մոտավոր՝ 5-10 լիտր/օր), ջրի օգտագործումը ներառում է գրասենյակային և կեցության համար նախատեսված տարածքների հատակների մաքրման համար:

Կոմունալ կենցաղային ջրօգտագործման ընդհանուր օրական ծախսը մեկ աշխատակցի համար տատանվում է միջինը 150-250 լիտր:

Ջրօգտագործման նպատակը		Քանակները	Նորմատիվ	Ժամկետ, օր	Ջրօգտագործման ծավալ մ ³	Ջրահեռացման ծավալ մ ³
Տեխնիկական նպատակներ	Բետոնի պատրաստում	4500	200 լ/մ ³	350	315000	
	Հողային աշխատանքներ	7000	20 լ/մ ²	70	9800	
	Շին տեխնիկայի սպասարկում	30 հատ	350 լ/հատ	240	2520	2520
	Փոշենստեցում	200 մ ²	3 լ/մ ²	480	288	
Կոմունալ կենցաղային	համելու	145 հոգի	250 լ/հոգի	480	17400	17400
	Անձնական հիգիենա					
	Սանհանգույց և զուգարան					
	Ամենօրյա մաքրություն					

Աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի իրականացվելու, համապատասխանաբար ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

Շինարարության ընթացքում ջրահեռացման պայմանները

Շինարարության ընթացքում ջրահեռացման պայմանները կարևոր նշանակություն ունեն: Ահա հիմնական սկզբունքները և պայմանները, որոնք պետք է պահպանել շինարարության ընթացքում ջրահեռացման գործընթացում.

4.1. Նախագծում և պլանավորում

- Շինարարական նախագծի նախապատրաստման ընթացքում պետք է նախատեսվի ջրահեռացման համակարգի դիզայնը:
- Անհրաժեշտ է հաշվի առնել տեղանքի ռելիեֆը, հողերի տեսակը, անձրևաջրերի հոսքը և մոտակա ջրահեռացման համակարգերի առկայությունը:
- Կոմունալ կեղտաջրերը պետք է հեռացվեն դեպի կոյուղու համակարգ, համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ներկայացված համակարգի նախագծման տեխնիկական պայմանների

4.2. Ժամանակավոր ջրահեռացման համակարգեր

- Եթե աշխատանքները կատարվում են անձրևոտ եղանակային պայմաններում, ուր կարող է լինել ստորերկրյա ջրերի բարձր մակարդակ, պետք է կազմակերպվի ժամանակավոր ջրահեռացման համակարգ:
- Տեղադրվում են ջրափոսեր, խողովակներ կամ պոմպեր, որոնք ապահովում են ավելորդ ջրի հեռացումը:

4.3. Ստորերկրյա ջրերի հոսքի կառավարում

- Ստորերկրյա ջրերի բարձր մակարդակի դեպքում անհրաժեշտ է տեղադրել պոմպեր կամ օգտագործել վակուումային համակարգեր՝ ջրի մակարդակը նվազեցնելու համար:
- Կարող են օգտագործվել ջրահեռացման շերտեր կամ հատուկ նյութեր՝ ջրի հոսքը շինարարական տարածք ուղղելու համար:

4.4. Անձրևաջրերի կառավարում

- Կառուցվում են ժամանակավոր ջրահեռացման խրամուղիներ կամ ավազաններ, որոնք ապահովում են անձրևաջրերի հեռացումը աշխատանքային տարածքից:
- Անհրաժեշտ է վերահսկել, որ ջրի հոսքը չվնասի հարակից տարածքները կամ շինարարական կառույցները:

4.5. Ջրահեռացման մշտական համակարգի կառուցում

- Մշտական ջրահեռացման համակարգը պետք է կառուցվի նախագծային պահանջներին համապատասխան:
- Օգտագործվում են խողովակներ, ջրատարներ, պոմպեր և այլ սարքավորումներ, որոնք ապահովում են ջրի հոսքն ու հեռացումը:

4.6. Շինհրապարակի անվտանգություն

- Ջրահեռացման աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն անվտանգության կանոնները, հատկապես, եթե օգտագործվում են մեխանիկական սարքավորումներ կամ աշխատակիցները աշխատում են ջրի հարևանությամբ:
- Պետք է ապահովվի աշխատակիցների պաշտպանությունը՝ օգտագործելով հատուկ հանդերձանք (ջրապաշտպան կոշիկներ, ձեռնոցներ և այլն):

4.7. Շրջակա միջավայրի պաշտպանություն

- Անհրաժեշտ է բացառել կեղտաջրերի կամ շինարարական նյութերի արտահոսքը մոտակա ջրային մարմիններ:
- Հատուկ ֆիլտրեր կամ ավազաններ կարող են օգտագործվել ջրի մաքրման համար նախքան դրա արտահոսքը ընդհանուր համակարգ:

4.8. Կանոնակարգերի համապատասխանություն

- Պետք է պահպանվեն տեղական շինարարական նորմերն ու կանոնները:
- Ջրահեռացման աշխատանքները պետք է համապատասխանեն բնապահպանական և տեխնիկական պահանջներին:

Նախատեսվող գործունեության շինարարական փուլուն ջրահեռացման նախնական հաշվարկային ծավալը կկազմի մոտ 20 հազ մ³ /տարի: Հեռացվող հոսքաջրերը մաքրում չպահանջող հոսքաջրեր են, որոնք պետք է ուղղվեն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ենթակայությամբ գործող կոյուղաջրերի հեռացման համակարգ:

Շահագործման ընթացքում ջրօգտագործման և ջրահեռացման պայմանները

Հյուրանոցային համալիրի կառուցման ավարտից հետո, նախագծային փաստաթղթերով նախատեսվող ջրօգտագործման ծավալները ներկայացվում են աղյուսակային տեսքով:

№	Ջրօգտագործման անվանում	Օգտագործողների քանակ	նորմա լ/օր	Ջրպահանջ			Ջրահեռացում		
				մ ³ /օր	մ ³ /ժամ	լ/վ	մ ³ /օր	մ ³ /ժամ	լ/վ
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Հյուրանոց								
1	Համարներ ցնցուղով	160	230	36,80	4,99	2,44	36,80	4,99	4,42
2	Համարներ ցնցուղով և լոգարանով	40	300	12,00	2,04	1,18	12,00	2,04	4,72
3	Ռեստորան	Число условных блюд 1073 В наибольший час 130	12	12,88	3,94	1,78	12,88	3,94	3,38
4	Ռեստորան-բար	Число условных блюд 1485 В наибольший час 220	12	17,82	5,65	2,43	17,82	5,65	4,03
5	SPA	650	50	32,50	19,99	7,68	32,50	19,99	9,28
	Ընդամենը			112,00	36,61	15,51	112,00	36,61	25,83
	Լողավազան								
	Համալրման ծավալը	V=175.91	լողավազանի	18,456	0,769	0,214			

			ծավալի 10%						
	Ֆլտրների մաքրում	Ըստ տեխ առաջադրանքի							19,800
11	Լվացքատուն	Ըստ տեխ առաջադրանքի	21,840	0,910	0,600	21,840	0,910	0,600	
	Ընդամենը		40,296	1,679	0,814	40,296	1,679	0,600	
	Ամբողջությամբ		152,296	38,289	16,324	152,296	38,289	49,444	
	Մեկանգամյա լողավազանի լցման համար	Ըստ տեխ առաջադրանքի	184,56	3,845	1,068				
	Մեկանգամյա լողավազանի դատարկման համար	Ըստ տեխ առաջադրանքի				184,56	7,69	2,14	
	Գազոննորի ջրում	250	3	0,75					
Հրդեհամարման համակարգի համար ջրի պահանջարկ									
	Ներքին հրդեհամարման համակարգ					5,2			
	Արտաքին հրդեհամարման համակարգ					35,00			

Քաղաքային ցանցից, ջրմատակարարման օպերատորից, ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայմաններ ստանալու համար պետք է նախատեսել:

Ջուր խմելու:	Ջրահեռացում
Օրեկան պահանջարկ - 152,3 մ³/օր Մաքսիմալ ժամային պահանջարկ – 38,3 մ³/ժամ Մաքսիմալ պահանջարկ – 16,3 լ/վ	Օրեկան ջրահեռացում - 152,3 մ³/օր Մաքսիմալ ժամային արտահոսք – 38,3 մ³/ժամ Մաքսիմալ արտահոսք – 49,5 լ/վ.

Ընկերությունը պլանավորում է շահագործման փուլում, համալիրի տարածքի բաց լճակի և կանաչապատ տարածքների ոռոգման համար օգտագործել ստորերկրա ջրային ռեսուրսներ: Ստորերկրա ջրային ռեսուրսի ձևակերպման, ծավալերի հստակեցման, Ջրօգտագործման թույլտվության ստացման համար, Ընկերությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների, աշխատանքներ կհականացնի շինարարական փուլի ավարատից հետո:

Թափոնների կառավարում

Թափոնների հիմնական տեսակները շինարարության ընթացքում

- Բետոնային թափոններ. Բետոնային խառնուրդների ավելորդ մնացորդները, անորակ բետոնը:

- Աղյուսի և քարերի մնացորդներ. պատերի կառուցման ժամանակ օգտագործված նյութերը, որոնք մնում են, կամ վնասված շինանյութերը որոնք դառնում են թափոններ:

- Փայտյա թափոններ. Շինարարական փայտանյութերի կտորները, դեկորատիվ աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդները և փչացած նյութերը:

- Մետաղների կտորներ. Շինարարությունում օգտագործվող մետաղական կոնստրուկցիաների, ինչպիսիք են ամրանների, խողովակների և մետաղական կարկասների մնացորդներ, խոտանված կոնստրուկցիաներ:

- Փաթեթավորման նյութեր. Շինարարության ընթացքում օգտագործվող նյութեր և առարկաներ, որոնք ունեն արտաքին փաթեթավորում, ներառում են մեծ քանակությամբ թղթե նյութեր, որոնք դառնում են թափոններ:

- Հողային աշխատանքների ընթացքում հողային զանգված և գրունտ: Հողային հանվածքներ, ծածկագիր 3140110101005, 5-րդ դաս: Ընդհանուր հանված հողի ծավալը կկազմի 37հազ մ³: Հետլիցքի համար առկա ծավալը գնահատվել է՝ 20000 մ³: Ավելցուկային 17000 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքային կառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

- Շինհրապարակում օգտագործվող տեխնիկայի և մեքենաների պահեստամասերը, յուղերը, լուբրիկանտները:

- Կենցաղային աղբ

Շինարարության ընթացքում առաջացող թափոնները կարևոր խնդիր են, սակայն դրանց արդյունավետ կառավարելու դեպքում խնայվում են

ոեսուրսները, նպաստում են շրջակա միջավայրի պահպանմանը, տնտեսական ծախսերի նվազեցում և սոցիալական կայունություն է ապահովվում:

Թափոնների կառավարման առաջարկներ

Թափոնի անվանում	Հավանական քանակները	Օրենսդրական պահանջ	Առաջարկվող գործույթություններ
Բետոնային թափոններ, Վդաս	3-5տ	Ոչ լավորակ բետոնային կառուցվածքներ և դետալներ, ծածկագիր 3140270501995 ¹	Ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր
Աղյուսի և քարերի մնացորդներ, Վդաս	5-8 տ	Աղյուսի ջարդոն, ծածկագիր 3140070501005	
Փայտյա թափոններ, Վդաս	1տ	Շինարարության փայտանյութի թափոններ, ծածկագիր 1720200099005	
Մետաղների կտորներ, Վդաս	3-5տ	Չաղտոտված պողպատե մետաղամնացուկներ, ծածկագիր 3512011801995	Հանձնվում է մետաղաձուլական ըկերություններին, վերամշակման նպատակով
Փաթեթավորման նյութեր, Վդաս	1տ	Չաղտոտված ստվարաթղթե փաթեթավորման թափոններ, ծածկագիր 1871020201005	Հանձնվում է վերամշակման նպատակով
Հողային զանգված և գրունտ, Վդաս		Հողային հանվածքներ, ծածկագիր 3140110101005	Օգտագործվում է նախագծի տարածքի ընդհանուր պլանավորման և հարթեցման աշխատանքներում իսկ ավելցուկը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր
Շին տեխնիկայի թափոններ III - IV դաս	500-1000կգ	Բանեցված չվնասված կապարե կուտակիչներ՝ չձուլված էլեկտրոլիտով, ծածկագիր 9211010213013	Արգելել նախատեսվող գործունեության տարածքում հավաքելը: Կապալառու ընկերությունների հետ պայմանագրում ներառել թափոնների հավաքման պայմանը:
	4-8տ	Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ, ծածկագիր 5410030202033	
	2-3տ	Բանեցված օդաճնշիչ դողեր, ծածկագիր 5750020013004	
	Մինչև 1տ	Բանեցված կոմպրեսորային յուղեր, ծածկագիր 5410021102033	

¹ Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրաման

Կենցաղային աղբ, IV դաս	70*145*2=20. 3տ	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ծածկագիր 91200400 01 00 4	Ենթակա է հավաքման և համայնքային աղբավայրում տեղադրման
Հագուստի և գործվածքի անպիտան մնացորդներ IV դաս	200-300կգ	Յուղոտված լաթեր, ծածկագիր 5820060001014	Ենթակա է հավաքման և համայնքային աղբավայրում տեղադրման

Մթնոլորտային արտանետումներ

Շինարարական փուլում մթնոլորտային արտանետումները կարող են զգալի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այս գործընթացներում արտանետումները հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով՝

- Հողային աշխատանքներ
- Շինարարական տեխնիկայի օգտագործում: Բեռնատարներ, էքսկավատորներ և այլ մեքենաներ, որոնք աշխատում են դիզելային կամ բենզինային շարժիչներով, արտանետում են ածխաթթու գազ (CO_2), ազոտի օքսիդներ (NO_x) և այլ վնասակար նյութեր:
- Փոշի և մասնիկներ: Շինարարական գործողությունների ընթացքում, օրինակ՝ քանդման կամ ավազի ու ցեմենտի օգտագործման ժամանակ, փոշի և կոշտ մասնիկներ (PM_{10} , $PM_{2.5}$):

Հիմքերի, տարածքի բարեկարգման և ասֆալտապատման ժամանակ փոշու արտանետման հաշվարկը՝

$$A = G * k_1 * k_2 * k_3 * k_4 * k_5 * k_7 * B$$

Որտեղ՝

Հանույթի և բեռնվող նյութերի քանակը, G, T

Ֆրակցիայի բաժնեմասը, K1

Աէրոզոլի փոխանցվող փոշու բաժնեմասը, K2

Տեղանքի կլիմայական պայմանները հաշվի առնող գործակիցը, K3

Նյութի խոնավությունը հաշվի առնող գործակից, K5
Նյութի խոշորությունը հաշվի առնող գործակից, K7
Տեղանքի պայմանները հաշվի առնող գործակից, K4
Թափման բարձրությունը հաշվի առնող գործակից, B
Փոշու արտանետումների հաշվման բանաձևը $t/2$ ժամ

Հողային աշխատանքներ

$$A = 7000 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.470$$

Հետլիցքի աշխատանքներ

$$A = 3000 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.202$$

Խճի փոման աշխատանքներ

$$A = 2500 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.168$$

Ավազ

$$A = 90 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.006$$

Ցեմենտ

$$A = 3300 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.22$$

Դիզելային վառելիք այրման արգասիքների հաշվարկը՝ ծանր բեռնատար ավտոտրանսպորտից արտանետումները հաշվարկելու համար օգտագործվել են արտանետումների հետևյալ գործակիցները ծախսվող վառելիքի 1կգ -ի համար՝

Կոշտ մասնիկներ՝ 2.9 գ/կգ

Ածխածնի օքսիդ՝ 18.6 գ/կգ

Ցնդող օրգանական միացություններ(ածխաջրածիններ)՝ 8.1գ/կգ

Ազոտի օքսիդներ՝ 36.1գ/կգ

Աեծ շին տեխնիկայի աշխատանքային ժամանակ դիզելային ծախսը կկազմի 18տ/շին ժամ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/տարի
Շին տեխնիկա	NO _x	36.1	0.650
	CO	18.6	0.335
	C _x H _y	8.1	0.146
	ԿՄ	2.9	0.052

Ծծմբային անհիդրիդի արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է ծծմբային անհիդրիդի, որի քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$E_{SO_2} = 2 \sum k_s b,$$

որտեղ՝

k_s – ծծմբի պարունակությունն է վառելիքում՝ կգ/կգ

b - վառելիքի ծախսն է՝ կգ

2004թ. դեկտեմբերի 31-ից սահմանվել է ծծմբի պարունակության նորմ օգտագործվող վառելիքներում՝ 50 մգ/կգ, համաձայն ԵՆ-590-2004 ստանդարտի՝ մինչև 2009թ., իսկ 2010թ.՝ 10մգ/կգ:

Այս աշխատանքում ծծմբային անհիդրիդի արտանետումները հաշվարկելիս, ստացվում են շատ փոքր քանակներ՝ այդ պատճառով ծծմբային անհիդրիդի արտանտումները հաշվարկներում չեն ընդգրկվել:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը շինարարության ողջ ժամանակահատվածում

Փոշի - 1.066տ

NO_x - 0.650տ

CO – 0.335տ

CxHy – 0.146տ

Կոշտ մասնիկներ – 0.052տ

Այս արտանետումները ոչ միայն վնասում են մթնոլորտը, այլև կարող են առաջացնել առողջության խնդիրներ՝ մասնավորապես շնչառական համակարգի հիվանդություններ: Շինարարության գործընթացում արտանետումները նվազեցնելու համար կիրառվում են մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ վերականգնվող էներգիայի օգտագործումը, ավտոմատացված և արդյունավետ մեքենաներ, և ջրի ցողման համակարգեր՝ փոշու նվազեցման համար:

Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N 2-III-11. 3 սանիտարական նորմի:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- Պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը

- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում աշխատատեղերում և մոտակա բնակելի տարածքներում առաջացող աղմուկի և թրթռումների մակարդակների գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

Աղմուկի մակարդակի գնահատում (dB)

Գործոններ՝

- Օգտագործվող սարքավորումներ՝ բուլդոզեր, էքսկավատոր, հորատման սարքավորումներ և այլն:
- Սարքավորումների աղմուկի մակարդակներ՝ սարքերի արտադրական բնութագրերում նշված են աղմուկի ելքային արժեքները (սովորաբար դեցիբելներով՝ dB):
- Հեռավորություն աղմուկի աղբյուրից՝ աղմուկի մակարդակը նվազում է հեռավորության ավելացման հետ համաձայն աղմուկի տարածման օրենքների:
- Շրջակա միջավայրի պայմաններ՝ պատնեշների առկայությունը, օդի խոնավությունը և այլն:

Հաշվարկ՝

Աղմուկի մակարդակի նվազումը (ըստ հեռավորության) առաջարկվում է հաշվարկել այս բանաձևով՝

$$L_p = L_w - 20 \log_{10}(r) - 8$$

որտեղ՝

L_p — աղմուկի մակարդակը ընդունող կետում,

- Lw — աղմուկի մակարդակը ծագման աղբյուրում,
- r — հեռավորությունը աղմուկի աղբյուրից (մետրերով),
- Ց —միջին կորուստ:

Նախատեսվող գործունեության շինարարական փուլում, բնակելի տարածքում՝ հասարակական և բնակելի շենքերի սենքերում թափանցող աղմուկի առավելագույն և համարժեք ձայնի մակարդակների թույլատրելի նշանակությունները պետք է չգերազանցի²

Աշխատանքային ժամերին (07:00–23:00):

Բնակելի տարածքների համար թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **55dB**: Այս արժեքը կախված է աղմուկի բնույթից (հանգիստ ֆոնային կամ պիկավոր աղմուկ):

Գիշերային ժամերին (23:00–07:00):

Աղմուկի մակարդակը պետք է նվազեցվի՝ թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **45 dB**:

Շինարարական աշխատանքների կատարում արտադրական սենքերի և կազմակերպությունների տարածքների մշտական աշխատատեղերում՝ թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **80 dB**:

Նախատեսվող գործունեության ընթացքում օգտագործվող տեխնիկական միջոցներից և մեխանիզացիայից հնարավոր աղմուկի մակարդակները ներկայացված են աղյուսակային տեսքով: Աղմուկի մակարդակը նախատեսվող գործունեության ամենամոտ զգայուն կլանիչների նկատմամբ կանխատեսվում է ոչ էական, քանի որ ամենամոտը բնակելի տները են, որոնք գտնվում են շին հրապարակից 50մ հեռավորության վրա և բաժանված են փողոցով:

Աշխատակիցների համար սահմանվում է պայման՝ ականջապաշտպանիչ միջոցների կիրառում (85 դԲ-ից բարձր աղմուկի դեպքում):

² Համաձայն «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի

Տեխնիկական միջոցի անվանումը	Ընդունված աղմուկի մակարդակներ	պայման	
Ավտոկռունկ	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 65-75 դԲ • Շարժիչի և մեխանիզմների աղմուկ՝ 75-85 դԲ • Արտաքին աղմուկ (աշխատանքային տարածքում, մոտ 10 մ հեռավորության վրա)՝ 80-95 դԲ 	աղմուկի	
Էքսկավատոր (CAT, Komatsu, Volvo)	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում ներսում՝ 70-75 դԲ • Խցիկից դուրս (աշխատանքի ընթացքում)՝ 85-110 դԲ • Շարժիչի աղմուկ՝ 75-100 դԲ • Հիդրավլիկ համակարգի աղմուկ՝ 70-90 դԲ 		
Ավտոկռունկ	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 68-80 դԲ • Շարժիչի և հիդրավլիկ պոմպերի աղմուկ՝ 75-90 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա)՝ 85-100 դԲ • Բեռնման և շարժման ընթացքում՝ 90-105 դԲ 		
Բուլդոզեր	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 75-85 դԲ • Շարժիչի աղմուկ՝ 80-100 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա)՝ 90-110 դԲ • Գետնի հետ շփման և բեռնման ընթացքում՝ 95-110 դԲ 		
Գրեյդեր	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 75-85 դԲ • Շարժիչի աղմուկ՝ 80-100 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա)՝ 85-105 դԲ • Գետնի հետ շփման և աշխատանքի ընթացքում՝ 90-110 դԲ 		
Բետոնապոմպ	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 70-80 դԲ • Շարժիչի աղմուկ՝ 80-95 դԲ • Հիդրավլիկ պոմպերի և մղման մեխանիզմների աղմուկ՝ 85-100 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա)՝ 90-110 դԲ 		
Ավտոինքնաթափ	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 70-85 դԲ • Շարժիչի աղմուկ (դիզելային կամ բենզինային)՝ 80-100 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա, ընթացքի ժամանակ)՝ 85-105 դԲ • Բեռնման/բեռնաթափման ժամանակ՝ 90-110 դԲ 		
Ավտոբետոնա խառնիչ (բետոնամշակիչ)	<ul style="list-style-type: none"> • Օպերատորի խցիկում՝ 70-80 դԲ • Շարժիչի աղմուկ (դիզելային կամ բենզինային)՝ 80-100 դԲ • Հիդրավլիկ պոմպերի և խառնարանի աղմուկ՝ 85-100 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա, աշխատանքի ընթացքում)՝ 90-110 դԲ • Բետոնի բեռնման/բեռնաթափման ժամանակ՝ 95-110 դԲ 		Աշխատակիցների համար ականջապաշտպանիչ միջոցների կիրառում (85 դԲ-ից բարձր աղմուկի)

Թրթռման մակարդակի գնահատում

Գործոններ՝

- Սարքավորումների տեսակ և հզորություն՝ հորատման սարքավորումներ, բետոնային կտրող մեքենաներ և այլն:

- Հողային պայմաններ՝ փխրուն հողեր, կավային կամ քարային հիմքեր:
- Հեռավորությունը թրթռման աղբյուրից:

Հաշվարկ՝

Թրթռման մակարդակի նվազումը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$V_p = V_s \cdot e^{-\alpha \cdot r}$$

որտեղ՝

- V_p — թրթռման մակարդակը տվյալ կետում,
- V_s — թրթռման մակարդակը ծագման աղբյուրում,
- α — հողի վրա թրթռման նվազման գործակիցը,
- r — հեռավորությունը թրթռման աղբյուրից:

Թրթռման ազդեցությունը գնահատվում է արագացման (m/s^2), արագության (m/s) կամ դիսպլացեմենտի (m) մակարդակներով: Նախատեսվող գործունեության շինարարական փուլում, տարբեր նորմատիվներ կարող են կիրառվել, բնակելի տարածքների համար ընդհանուր արժեքներ են.

- o Օրվա ընթացքում՝ 1-3 m/s^2 (թրթռման արագություն):
- o Գիշերային ժամերին՝ $< 1 m/s^2$:

Աշխատատեղերում թրթռման թույլատրելի մակարդակները սահմանվում են ըստ միջազգային և ազգային նորմերի³ **ISO 2631-1 ("Մարդկանց վրա մեխանիկական թրթռման ազդեցություն")**, **ISO 5349 (ձեռքի-բազուկային թրթռում)**, և տեղական օրենքներով:

Ցուցանիշ	Թույլատրելի մակարդակ
Կանխարգելիչ մակարդակ	1.15 m/s^2 (հետադարձ արագացում) ՝ խրախուսվում է չգերազանցել, երբ թրթռումն ակտիվ աշխատանքային գործընթացի մասն է:
Թրթռման ազդեցության սահմանաչափ	2 m/s^2 (հետադարձ արագացում) ՝ երկարաժամկետ ազդեցության դեպքում համարվում է վտանգավոր:
Աշխատանքային օրվա համար (8 ժամ)	0.5 m/s^2 (հետադարձ արագացում) ՝ երկարաժամկետ ազդեցության դեպքում չի առաջացնում առողջության լուրջ խնդիրներ:

³ «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-009-06

5. Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատում

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար: Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի, բնությանը հասված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի»՝ հաստատված 21.01.2005թ. թիվ 91-Ն ՀՀ կառավարության որոշման: Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = \sum q \cdot \Phi g \cdot \psi_i \cdot \rho_i (1),$$

Ա - ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամներով

Շգ - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որը վերցվում է համաձայն նշված կարգի 9 աղյուսակի:

ψ_i - i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10 և 11 կետերի:

ρ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φg -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով

բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն,

$\Phi_g = 1000$ դրամ:

ρ_i գործակիցը որոշվում է 5-րդ բանաձևով՝

$$\rho_i = q * S_{U_i} \quad (5)$$

S_{U_i} - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

q - գործակից, $q=1$ ՝ անշարժ աղբյուրների համար, $q=3$ ՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

S_{U_i} - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակում:

Արտանետումներից շրջակա միջավայրին հասցված տարեկան տնտեսական վնասը գնահատվում է 173915 ՀՀ դրամ:

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Շգ	Φ_g	Վ _i	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	S_{U_i}	q	$\rho_i = S_{U_i} \times q$				
Փոշի	1.066	1	1.066	8	1000	10	85280
NO _x	0.650	1	0.650	8	1000	12.5	65000
CO	0.335	1	0.335	8	1000	1.0	2680
C _x H _y	0.146	1	0.146	8	1000	3.16	3691
Կոշտ մասնիկներ	0.052	1	0.052	8	1000	41.5	17264

6. Շրջակա Միջավայրի և Սոցիալական ռիսկերի գնահատում

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատումը իրականացվել է համաձայն ՄՖԿ-ի գործունեության չափանիշների (ԳԶ)⁴: Ռիսկերի կշիռը որոշվել է համաձայն այս մատրիցայի:

Մակարդակներ		Յետևանքներ				
		1	2	3	4	5
Յաճախականություն	Բնութագիրը	Ոչ էական	Ցածր	Միջին	Բարձր	Էական
Ա	Մշտական	Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5
Բ	Յաճախակի	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5
Գ	Երբեմն	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5
Դ	Ոչ հաճախակի	Դ1	Դ2	Դ3	Դ4	Դ5
Ե	հազվադեպ	Ե1	Ե2	Ե3	Ե4	Ե5

Ռիսկերի մակարդակները նախատեսվող գործունեության համար

Գործունեության չափանիշներ		Ռիսկի մակարդակ
ԳԶ 1	Սոցիալական և շրջակա միջավայրի (Ս. և Շ.) գնահատման և կառավարման համակարգ	Ա2
ԳԶ 2	Աշխատանքային և զբաղվածության պայմաններ	Բ3
ԳԶ 3	Ռեսուրսների օգտագործման էֆֆեկտիվություն և Աղտոտման կանխարգելում, նվազեցում	Բ3
ԳԶ 4	Հարակից համայնքների առողջություն, ապահովություն ու անվտանգություն	Դ2
ԳԶ 5	Հողատարածքի ձեռքբերում և հարկադիր վերաբնակեցում	Ե1
ԳԶ 6	Կենսաբազմազանության պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում	Գ3
ԳԶ 7	Բնիկ ժողովուրդների իրավունքներ	Կիրառելի չէ
ԳԶ 8	Մշակութային ժառանգություն	Գ3

Եզրակացություն: համաձայն Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի գործունեության չափանիշների, նախատեսվող գործունեության ՇՄՍ ռիսկերի մակարդակը միջին է որը պարտավորեցնում է՝ *Միջին ռիսկ պարունակող գործունեությանը է դասվում սովորաբար այնպիսի գործունեությունը, որի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունը կարելի է կանխագուշակել, կանխարգելել և/կամ*

⁴ <https://www.ifc.org/en/insights-reports/2012/ifc-performance-standards>

նվազեցնել նախափեսվող գործունեության համապատասխան ֆինանսական և տեխնիկական/կառավարչական հնարավորությունների առկայության դեպքում:

7. Բնապահպանական կառավարման պլան

Բնապահպանական վտանգներ ու ազդեցություններ			
	Այո / Ոչ	Նշումներ	
Փոփոխությունների պատճառ հանդիսացող վտանգներ ու ազդեցություններ	Մթնոլորտային օդի որակ	Այո Շինարարության ընթացքում սպասվում է մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Բնապահպանական ռիսկերից խուսափելու համար պետք է կիրառվեն մեղմացնող միջոցառումներ: Մասնավորապես <ul style="list-style-type: none"> Ապահովել փոշու քանակների ամսեկան չափում, գործիքային չափման միջոցով Փորման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն փոշին նստեցնող միջոցառումներ, օրինակ՝ հողի մակերեսը խոնավեցնելը, Փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա անհրաժեշտ է ջրցանում՝ փոշին նստեցնելու նպատակով, փոշու տարածումը կանխարգելելու համար սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօդյա այրումը չի թույլատրվում, Շինարարական տեխնիկական և սարքավորումները պետք է շահագործվեն ըստ նպատակի և անցնեն տեխնիկական սպասարկում, Նյութերը և թափոնները պետք է տեղափոխվեն ծածկված թափք ունեցող բեռնատարներով:
	Աղմուկի մակարդակների վրա	Այո Աղմուկի մակարդակը կփոփոխվի շինարարության ընթացքում, անհրաժեշտություն կառաջանա պարբերաբար չափել աղմուկի մակարդակը	Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը բնակավայրերի մոտակայքում պետք է սահմանափակվի աշխատանքային ժամերով: Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից և ճամբարներից հնարավորիս հեռու:
	Հողի որակ	Այո Շինարարության ընթացքում սպասվում է հողի որակի փոփոխություն	Հողի բերրի շերտը պետք է պահպանվի ազգային օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Ավելցուկային հողահանույթը պետք է պահպանվի պատշաճ, և օգտագործվի հետագայում տարածքների վերականգնման համար:
	Զրի որակ	Այո	Վառելիքի, քայուղերի կամ այլ թունավոր և վտանգավոր նյութերի պատահական արտահոսքը

	Որոշակի ազդեցություններ կգրանցվեն գրունտային ջրերի վրա՝ շինարարության փուլում, անհրաժեշտություն կառաջանա պարբերաբար կատարել ջրի անալիզ	կանխելու և դրա առաջացման դեպքում ճիշտ գործելու նպատակով, պետք է մշակվեն հատուկ կանոնակարգեր: Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այդ նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:
Կենսաբազմ ազանություն	Այո Որոշակի ազդեցություններ կգրանցվեն կենսաբազմազանության վրա՝ շինարարության փուլում	Խստորեն վերահսկել բուսականության մաքրման աշխատանքները /եթե դա առկա է՝ նախատեսված գոտուց դուրս ազդեցությունները կանխելու համար: Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և բացառվի ծառերին վնաս հասցնելը: Տարածքի բարեկարգման համար պետք է օգտագործել տարածաշրջանին բնորոշ տեսակներ, ինվազիվ տեսակների տունկը պետք է բացառել:
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը պետք է գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին
Կենսական միջավայրի վրա	Այո Որոշակի ազդեցություններ կգրանցվեն կենսական միջավայրի վրա՝ շինարարության փուլում	Սահմանափակել տրանսպորտային միջոցների տեղաշարժը և տեղակայումը ծրագրի տեղամասին հարող տարածքներում: Հողային աշխատանքները կատարել հատուկ մշակված ժամանակացույցով, ինչը թույլ կտա կանխել հողային աշխատանքները կենդանիների ձմեռման և վերարտադրության ընթացքում:
Կլիմայի փոփոխություն	Ոչ Շինարարության ընթացքում որևէ ազդեցություն չի գրանցվի կլիմայի փոփոխության մակարդակի վրա	

Սոցիալական վտանգներ ու ազդեցություններ

<p>Աշխատակիցների անվտանգության և առողջության պաշտպանություն</p>	<p>Այո</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում առկա են վտանգներ աշխատակիցների համար</p>	<p>Աշխատանքի անվտանգության ռիսկերից խուսափելու համար կկիրառվեն մեղմացնող միջոցառումները:</p> <p>Մասնավորապես</p> <ul style="list-style-type: none"> • Կբարձրացվի իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ, • 18 տարեկանից ցածր աշխատուժի օգտագործումը կարգելվի • Բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված կլինի և կօգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ, • Բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում կստանան • Խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված կլինեն, • Շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն, • Շինարարական տեխնիկական կօգտագործվի շահագործման հրահանգների պահպանմամբ, • Շինարարական տեղամասերը ապահովված կլինեն առաջին օգնության բժշկական փաթեթներով և հակահրդեհային սարքավորումներ, • Աշխատանքային ժամերից դուրս կարգելվի գործունեությունը տեղանքում, • Ակտիվ աշխատանքային տարածքները կլինեն ցանկապատված:
<p>Մարդու իրավունքներ</p>	<p>Այո</p> <p>Ազդեցության ենթակա անձանց և/կամ տնային տնտեսությունների իրավունքները կարող են խախտվել ծրագրի հետևանքով</p>	<p>Խորհրդատվական ծառայությունների շրջանակներում կմշակվեն «Բողոքների մեխանիզմներ», որոնք հնարավորություն կտան ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց վերհանելու և լուծելու իրենց մտահոգող խնդիրները:</p>
<p>Սոցիալ-տնտեսական կարգավիճակին</p>	<p>Այո</p> <p>Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի ծրագրի շահառու համայնքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը</p>	<p>Շինարարական փուլում և շահագործման փուլում կպահանջվի մարդակից ռեսուրսներ, որոնք կլրացվեն տեղական աշխատաշուկայի առկա առաջարկով, անհնարինության դեպքում միայն կներգրավեն հարակից համայնքներում առկա ռեսուրսները:</p>
<p>Միջոցների հասանելիությանը</p>	<p>Այո</p> <p>Կաճի զբոսաշրջության, ռեկրացիոն ռեսուրսների շահագործման մասնակցությունը և հասանելիությունը Ծաղկածոր համայնքի և նրանում ներառված</p>	

	գյուղական բնակավայրերում	
Կենսապայմաններ	Այո Հյուրանոցային համալիրի շահագործումը կխթանի և կնպաստի տարածաշրջանի բնակչության տնային տնտեսությունների կենսապայմանների բարելավմանը	Ազդեցության ենթակա անձանց/ տնային տնտեսությունների կենսապայմանների բարելավումը կամ առնվազն ծրագրին նախորդող մակարդակի վերականգնումը կնախատեսվի շրագրի շրջանակներում: Շահագործման փուլում կաճի սննդի պատրաստման փոքր բիզնեսի պահանջարկի աճ, որը դրական ազդեցություն կունենա համայնքի համար:
Հողերի ձեռքբերում	Ոչ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն նախատեսվող գործունեությունը իրականացվում է սեփականության իրավունքով հողամասի վրա:	Այլ պայման չկա:
Գենդերային հարցերին	Ոչ Ծրագիրը չի հանգեցնի գենդերային անհավասարության խթանման	
Մշակութային և ժառանգությանը	Ոչ Ծրագրի իրականացման անմիջական տարածքում առկա չեն պատմամշակութային հուշարձաններ	Մշակութային արտեֆակտների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է գործել համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:
Համայնքի առողջությանն ու անվտանգությանը	Այո Շինարարության ընթացքում հնարավոր են ազդեցություններ համայնքի առողջության և անվտանգության վրա	Շինարարության փուլում հավանական ազդեցությունները համայնքի առողջության և անվտանգության վրա կգնահատվեն համապատասխան խորհրդատուի կողմից և կառաջարկվեն միջոցառումներ դրանցից խուսափելու կամ հնարավորինս մեղմացնելու նպատակով, մասնավորապես հանրային իրազեկման բարձրացման միջոցով:
Մասնակցությանը որոշումներ կայացնելու գործընթացին	Ոչ Ծրագիրը չի հանգեցնի առանձին անհատների և/կամ խմբերի որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցության մակարդակի վրա	

8. Մշտադիտարկման ծրագիր

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու

Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում	Շինհրապարակ դուրս մասնագիտացված կետերում	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
	- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում				
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի, գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար

Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու